«ՍԷԴ-ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ **ООО "СЭД-СИСТЕМС"**

ՖԱ Ալֆրեդ Գևորգյանին
ք.Երևան, Բագրատունյաց 24, բն 48

03.11.2021թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«ՍԷԴ-ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՖԱ Ալֆրեդ Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված «ՍԷԴ-ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի կարիքների համար նյութերի մատակարարման թիվ ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/3/2 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նյութերի մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ապրանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2,792,000 /երկու միլիոն յոթ հարյուր իննսուներկու հազար/ ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «ՍԷԴ-ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն 03 նոյեմբերի 2021 թվականին Ձեր կողմից ստանձնած ապրանքների մասով մատակարարումը չի կատարվել սահմանված ժամկետում և չի կարողացել կապ հաստատել Ձեր հետ, որից ելնելով ապրանքների մատակարարումը համարվում է չկատարված:

Վերոնշյալով պայամանավորված Կատարողը խախատել է պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չի ձեռնարկվել:

Ելնելով վերոգյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 ենթակետը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, «ՍԷԴ-ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ը 03.11.2021 թվականին միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականիմայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ

հաստատված<<Գնումներիգործընթացիկազմակերպմանմասին>>Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ՝ տեղեկացնում եմ, որ համաձայն Պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման տուժանքների մասին համաձայնագրերի 1.3 կետի՝ համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը կներկայացվեն Ձեր ընկերության սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու նպատակով:

Հարգանքով՝ Գործադիր տնօրեն ______________

Ռուզաննա Մարոյան